

որոգիւնի ԱՍՍՅԵԱՆ, Ի ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵԶԵԿԻԷԼԻ
ՄԱՐԳԱՐԷԻ:

Արդ պատճառք առաջին գալստեանն
յաւրինակ արծուի՝ զչարինն ասէ զոր հան-
դերձեալ էր գալ ի վերայ մնացեալ հրէիցն,
լի զարմացմամբ և արհաւիրաւք ցուցաւ տե-
սիլն: Զի ի վերջ հասեալ ժողովրդեանն ի չա-
րինն անդարձութեանն, և անյագ ի հեղու-
մնն արեան մարգարէիցն, միշտ ջատագով
լեալ ասէին: Խաղաղութիւն է, խաղաղութիւն
է: Սակս այսորիկ ոչ որ ի մարգարէիցն յաւ-
ժարէր խաւսիլ պատգամ ի տեսնէ առ
ժողովուրդն, վասն որոյ և Մովսէս ասէ. Ա-
ռաքեա՛ զայլ ոք, զոր առաքելոց ես, մինչև
բարկացաւ Տէր ի վերայ Մովսէսի: Եւ ետա-
յի ոչ գիտելով, եթէ բարկութիւն իցէ պատ-
գամ ժողովրդեանն, ասէր. Ահաւասիկ եմ ես
առաքեա՛ զիս: Իսկ իբրև գիտաց զպատգամն
խորհուրդ Հրէաստանի, դառնալ յանապատ
փութացաւ: Եւ զվախճան չարեացն գիտա-
ցեալ ասէ. Եւ արդ մինչև յերբ Տէր, և լուաւ
պատասխանի. Մինչև աւերեսցին քաղաքք ի
բնակչաց: Եւ երեմիայ ասէ. Ահաւասիկ խաւ-
սիլ իսկ ոչ գիտեմ: Վասն այսորիկ Զեզեկիէլ
մարգարէս յսկզբան տեսեանն վերացոյց հո-
գին՝ զի ի ձեռն ամբառնալոյն և արհաւիր-
ացն մի ևս տաց ժամ նմա միջոց զայլ ոք
խնդրել, այլ թաքեաւ յահէն, որպէս զԱբ-
րահամն ահիւն և զՍառայ, յորժամ խոտ-
տացաւ զորդին աւետեաց: Եւ զկնի գերու-
թեան և պանդխտութեան զաւակին աւե-
տեաց՝ նախ թմբրութիւն արկ ի վերայ նո-
րա և արհաւիրք, և հնոց ծխեալ մինչև
յերկինս, և նորաքանչ զարմացմամբ թըռ-
չունք պատերազմողք յերկնից, յաւրինակ ազ-
գաց ի վերայ Խորայէլի: Եւ զայս գործեաց
յառաջատեսութիւն բանին, զի մի ևս փու-
թացի Աբրահամ պաղատել առաջի Տեառն
վասն զաւակին աւետեաց խնդրել զոչ պան-
դրխտիլն՝ և ահա խափանումն լինէր ըն-
կըզմելոյն ֆարաւոնի և հերձանիլն ծովուն,
և զի լուիցեն ամենայն ազգք բնակեալք ի

վերայ երկրի կամ զի չափ քանանացոցն
լցցի: Վասն այսորիկ մարգարէն զառաջին
տեսիլն, զոր սքանչացմամբ ետես մի ևս լի-
նի հակառակող, որպէս և ասէ. Ե՛րթ և
ասա զայս ինչ և զայս և մի լինիր դառ-
նացուցիչ որպէս առնդ Խորայէլի: Եւ այս ա-
մենայն տեսեամբ ելանէր ի գլուխ մարգա-
րէին, որպէս և Պաւղոսի յայտնութեան
անդ ճանապարհին Դամասկեայ, զի ոչ ի ձեռն
մարմնոյ և ոչ ի ձեռն հոգւոյ, զի ոչ բանաբարձ
լեալ և ոչ անշունչ գոլ տեսիլ մարմնոյն: Արդ
տեսութիւն կառացն ի սկիզբն մարգարէու-
թեանն, զգալուստ Բաբելացոյն պատմէ ի վե-
րայ երուսաղէմի, որպէս Եսայի յսկզբան
անդ. Լուր երկին՝ ի վկայութիւն կոչելով, վա-
սրն գերութեանն, որ եհաս նոցա վասն չա-
րեաց նոցին: Եւ երեմիայ գաւազան և կատ-
սայ յեռանդան ի կոչման հիւսիսոյ զԲաբելոն
առակէր և զանթիւ զաւրս նորա: Արպէս
ասէ. Տեսի ասէ, և ահա հոգմ՝ դիմեալ գայր
ի հիւսուոյ, և ամպ մեծ ի նմա: * Աստուծոյ
զերագութիւն բարկութեանն եցոյց առ Նա-
բուգոգոնոսոր, իբրև զհոգմ ուժգին ի վե-
րայ հրէիցն, և ջերագ մերկախառն ամպով
էր անչափ զաւրքն քաղզէացոց: Կարձու-
ցանել յանշէն անապատ, զհրէաստան ա-
ռակեաց, ի հոգմ և ի մրրիկ, որպէս յոր-
ժամ զաւերն քաղզէացոց կամեցաւ ցու-
ցանել մարգարէին, որ ի ձեռն կիրոսի, նոյն-
պէս առակեաց ի մրրիկ, և զԲաբելոն յանա-
պատ և ի ծով: Տեսիլ ասէ, անապատին ծո-
վու, իբրև մրրիկ ընդ անապատ անցցէ ե-
կեալ յանապատէ, ի Մարաց և ի Պարսից:
Իսկ կառքն և անիւն յանուի՝ զբաղմութիւն
հեծելոցն Նաբուգոգոնոսորայ առակեաց, որք
միաբանեալ իբրև կամաւքն աստուծոյ, որպէս
թէ զաւրաւք հրեշտակաց ինքն Տէր ընդ
զաւրս քաղզէացոց ելեալ ի պատերազմ ի
վերայ մնացելոցն Հրէաստանի՝ ի վախճան
պարսպացն և տաճարին իբրև կթեալ սըրա-
մըտութեամբ եկն եհաս: Սակայն գթացեալ

* Եզեկիէլ Ա. 4:

ևս ի վերայ որդւոցն Յակոբայ ողորմածն Աստուած, ցուցանէ մարգարէիս և զշինումն տաճարին փառաւոր քան զառաջինն՝ ի ձեռքն հրեշտակին, որ մտեալ ձողաչափէր շուրջանակի զտեղի տաճարին՝ զոր պատմութիւնըն ցուցանէ: Ար նշանակէր խորհրդաբար զշինումն կաթուղիկէ եկեղեցւոյ ի Տեառնէ մերմէ՝ ձողաչափեալ ի մարմին նորա խաչին խորհրդով: Իսկ տանիլն զմարգարէն ի գուռքն փակեալ և տալ հրամանս թէ ոչ որ մըտցէ և ելցէ բայց միայն արքայն իսրայէլի Տէր մեր, որ ել ի կուսական արգանդէն և զկուսութիւնն անխախտելի պահեաց: Այլ և նովին խորհրդով եբաց զամուլ արգանդ աւազանին և բազմածնունդ արար ի ծոցոյ անտի երկնաւոր խորհրդով առակաւ բանին, զոր ասէ թէ ահա ջուր հոսէր ի վերայ գաւթացըն: Իսկ ծառատունկն շուրջ զափամբ գետոյն՝ զորդիսն աւազանին անուանէ: Եւ չափիլն հազար չափով միանգամ և երկիցս և երիցս՝ զյորդախաղաց գետ աւետարանին ցուցանէ: Եւ կացուցանիլն որսորդ՝ զառաքեալսն գուշակէր, սր կացիլն որսորդ ի վերայ աղբի մարդկան ի Տեառնէ մերմէ. ըստ այնմ՝ Արարից զձեզ որսորդս մարդկան, որով ելին ուռկանաւորք աւետարանին և որսացան զմարդիկ ի կեանսն յաւիտենից, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում պատիւ և զաւրութիւն յաւիտեանս ամէն:



ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ՝

ԿԱԹՈՒԿ ԵԿԵՂԵՅԻ՝

«Արարտի» նախորդ համարում հաղորդել էինք, որ Լևոն Թ.Գ պապն ի միջի այլոց ձգտում է կապ հաստատել նաև անգլիական եկեղեցու և վատիկանի միջև. Արդ Չատիկ օրն իսկ հրատարակուել է պապի կոնդակն «առ պատուական ազգն անգլիացւոց» որով Հռովմի քահանայապետը իրեն միայն յատուկ ճարտար ու խորամանկ ոճով հրաւիրում է անգլիական Ժողովրդին դառնալ «ճշմարիտ քրիստոսոնէութեան փարսիք՝ Փրկչի երկրաւոր փոխանոր-

դի գլխաւորութեան ներքոյ» և վերահաստատել այն եղբայրական սիրոյ սերտ կապերը որ խղուեցան Թ.Չ. դարում «եկեղեցու դէմ՝ յարուցուած ընդհանուր փոթորկի» շնորհիւ:

Պապը մեծ վարպետութեամբ շողջորդութելով անգլիացւոց ազգային ինքնասիրութեան՝ ցոյց է տալիս այն հիմունքը, որով կարող էին միանալ երկու քոյր եկեղեցիները և այն խնդիրները, որոնց լուծումն արդէն իսկ թէ անգլիական հասարակութեան ուշադրութեան առարկան է և թէ Լևոն Թ.Գ պապի իդէալը. այդ խնդիրներն են՝ պապի կոնգակի ասելովը, սօսիալական հարցը և հետզհետէ աճող նիւթապաշտական ուղղութեան առաջն առնելը:

— Լևոն Թ.Գ. պապի մի յատուկ հրամանով որոշուած է 300,000 ֆր. մի դրամագլուխ յատկացնել Հռովմում մի առանձին քարոզչական ձեմարան հիմնելու Պալիցիայի կաթողիկ ուռաների համար, Բացի սոցանից նոյն ձեմարանում սահմանուում է 20 թողակ բողբարացի, խրուաթ և այլ սլաւոնական ցեղերի պատանիների համար, որոնց կրթութեան խնդրին պապն առ հասարակ մի զարմանալի հոգատարութեամբ է վերաբերում:

— Պապի միաբարական ձգտումների մի արտայայտութիւնն է նաև յոյների համար Կ. Պօլսում մի նոր ձեմարան հիմնելու որոշումը: Կարգիլնալների մի յանձնախմբի՝ կազմած ծրագրի համաձայն՝ այդ ձեմարանը պիտի ընդունուին միայն հոգևոր դպրանոցներում իրանց ուսումն աւարտած յոյն պատանիներ: Պապի ցանկութիւնն է հիմնել մի մի հոգևոր դպրանոց նոյնպէս և արևելեան միւս ազգութեանց պատկանող կաթողիկների համար, բացի դորանից մտադրութեան կայ հիմնելու Կ. Պօլսում նոյն իսկ մի համալսարան յոյների համար:

ՌՈՒՍՍԱՅ ԵԿԵՂԵՅԻ

Ռուս հոգևորականները և մասնաւորապէս քահանաները, վերջերս մի խիստ օգտակար գործի բարի օրինակ են տալիս. եկեղեցու վիճակի վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ ընդհանրացնելու նպատակով նոքա սկսել են ուսումնասիրել մի մի թեմի կամ վիճակի եկեղեցիների, հոգևորականների, եկեղեցական դպրոցների դրութիւնը և իրանց ուսումնասիրութեան արդիւնքը առանձին տետրակներով հրատարակում են ի գիտութիւն հասարակաց: Այդպիսի մանրամասն տեղեկագրեր լոյս են տեսել արդէն Պոլտաւայի և Ղազանի թեմերի վերաբերութեամբ:

— Մի երկու տարի առաջ ուսաց մի քանի